Լոռու մարզպետի ելույթը ՊՆ նախաձեռնությամբ կազմակերպված միջոցառմանը

30.07.2015թ.

Հարգարժան պարոն գեներալ,

Հայոց բանակի հարգելի սպաներ,

Թանկագին զինվորներ, ծնողներ, հյուրեր:

Մեզանում արդեն լավ ավանդույթ է ձևավորվել, որ Հայոց բանակում գերազանց ծառայող զինվորներին՝ որպես խրախուսանք, կարճատև հանգստի մեկնումը կատարվում է իրենց հրամանատարների հետ ուղևորվելով, և զինվորների ծնողների հետ հանդիսավոր հանդիպելով:

Այսօր էլ, ահա, ՀՀ Պաշտպանության նախարարության նախաձեռնությամբ և Լոռու մարզպետարանի հետ համագործակցությամբ, Լոռու մարզից թիվ 2 բանակային կորպուսում ժամկետային զինծառայություն անցնող 75 զինվոր հանդիպեցին իրենց ծնողներին:

Սա անմոռանալի հանդիպում է: Անմոռանալի է հատկապես այն 21 զինվորի համար, ովքեր այսօր զորացրվում են և հարազատ օջախում շարունակելու են իրենց խաղաղ, արգասաբեր աշխատանքով լի կյանքը: Ուստի ես ցանկանում եմ նախ շնորհակալություն հայտնել նրանց հրամանատարներին, ովքեր երկու տարի շարունակ դաստիարակել, հոգով ու մարմնով կոփել են մեր տղաներին: Շնորհակալություն եմ ուզում հայտնել հայրենիքի նկատմամբ իրենց սուրբ պարտքը կատարած մեր տղաներին, ովքեր խիզախաբար և աննկուն կերպով երկու տարի շարունակ պաշտպանեցին մեր սահմաններն ու հարկ եղած դեպքերում արժանի հակահարված հասցրին հակառակորդի նկրտումներին:

Վերջապես ցանկանում եմ դիմել հայրենիքի սահմանները պաշտպանած ու պաշտպանող մեր բոլոր զինվորներին և ասել՝ սիրելի՛ զինվորներ, հիշեք, որ ձեր ծնողների հպարտությունը չափվում է ձե՛ր աննկուն ծառայության, և ձեր խիզախության չափով: Կուզեի, որ դուք ձեր ծառայության ամենադժվարին պահերին անգամ խորապես գիտակցեք, որ պաշտպանելով հայրենիքի սահմանները դուք պաշտպանում եք ձե՛ր ծնողներին, ձեր սիրած աղջկան, ձեր ու մեր թանկ, անփոխարինելի հայրենիքը:

Ես դիմում եմ նաև ծնողներին, որպես նրանցից մեկը, քանի որ իմ կրտսեր որդին էլ այժմ ծառայում է հայոց բանակում:

Թանկագին քույրեր և եղբայրներ, մեր ժողովրդի համար, հատկապես ծնողներիս համար, չկա ավելի ցանկալի ու թանկ բան, քան խաղաղ երկինքն է: Այդ խաղաղությունը մեզ պարգևում է մեր բանակի ռազմական հզորությունը և նրա անկոտրում, հաղթական ոգին: Բանակի ռազմական հզորությունը ժողովրդի աշխատանքի արդյունքով պետությունն է ապահովում, իսկ զինվորի հաղթական ոգին՝ դաստիարակում, կոփում ենք մենք՝ մեր ընտանիքներում: Այլ խոսքով ասած, մենք բոլորս մեր սուրբ հայրենիքի պաշտպանության ծառայության մեջ ենք՝ յուրաքանչյուրս մեր տեղում և մեր պարտականությամբ:

Այսօր, քան երբևէ, մեր սահմանները հուսալի պաշտպանված են: Այս ու այնտեղ հրադադարը խախտող հակառակորդն իր ուժն ու գերազանցությունը չէ, որ ցուցադրում է, այլ թուլությունն ու պարտվածին հատուկ վրիժառու մաղձը: Այդ նկրտումները միշտ էլ արժանի հակահարված են ստացել և այսուհետ ևս անպատասխան չեն մնա:

Փա՛ռք, անպարտելի հայոց բանակին:

Փա՛ռք հայոց բանակին ուժ ու կորով տվող մեր ժողովրդին: